

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ ԵՎ ԿԻՐԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Լեզվի ձևաբանական և շարահյուսական կառուցվածքների, բառաթեման կանոնների ամբողջության և բառերից ու բառերի քերականական ձևերից խոսք կազմելու օրինաչափություններն ուսումնասիրում է քերականությունը: Վերջինիս ուսումնասիրության բաժիններն են ձևաբանությունը և շարահյուսությունը:

Ձևաբանությունն ուսմունք է բառաձևերի, իսկ շարահյուսությունը՝ բառակապակցության, նախադասության և նրանց միավորների կապակցության մասին:

Այս հոդվածի շրջանակներում ԶԼՄ-ների նյութերի հիման վրա կանդրադառնանք ժամանակակից հայերենի ձևաբանական նորմի, մասնավորապես նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ և մակբայ) և կիրարկության հարցերին:

Հանգուցային բառեր և արտահայտություններ¹ նորմ, կիրարկություն, ձևաբանական նորմ:

Մասնագիտական գրականության մեջ **ձևաբանական նորմ** հասկացությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Ձևաբանական նորմը հասարակության կողմից ընդունելություն գտած, բոլորի համար պարտադիր ճանաչված քերականական կարգերի, քերականական իմաստների և նրանց ձևակազմիչ միջոցների համակարգը կարգավորող, օրինակարգավորող կանոնների ամբողջությունն է՝ պատմականորեն, տրամաբանական գործոններով, ավանդությամբ, ճշտությամբ և բարեհնչությամբ ամրապնդ-

ված:Սովորաբար ձևաբանության մեջ նորմավորման էությունը կանոնների միօրինակության մեջ է, նպատակը՝ միակերպության ձգտումը»¹:

Ա. Գոյականական նորմ և կիրարկություն: Առարկա կամ առարկայացված հասկացություն ցույց տվող բառերը մտնում են գոյականի կազմի մեջ:

ա) Գոյականի թվի քերականական կարգը: **Նորմ և կիրարկություն:** Էլեկտրոնային լրատվամիջոցների հիման վրա կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ձևաբանական նորմով սահմանված օրինաչափություններից շեղումներ, անընդունելի և սխալ կիրարկություններ են ի հայտ գալիս հատկապես գոյականի թվի քերականական կարգում:

Հոգնակի թվի կազմության և՛ հնչյունական-հնչյունափոխական, և՛ քերականական-ձևաբանական սխալ է առկա հետևյալ օրինակում. Կովկասի բոլոր **ժողովրդներին**² խաղաղություն, աշխարհի բոլոր **ժողովրդներին**² ժողովրդավարություն («Հայաստ. հանր. ռադիո», «Ռադիոլուր», 08.09.04, ռադիոլրագրող):

Ու ձայնավորի հնչյունափոխությունն ընդունելի է տվյալ բառի հոլովման ժամանակ (**ժողովրդի, ժողովրդից** և այլն), բայց ոչ հոգնակիակազմության դեպքում: Այստեղ պետք է հնչեր **ժողովուրդներին** ճիշտ բառաձևը:

Հետևյալ օրինակը վերաբերում է

¹ Աղաջանյան Զ. Խ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հիմունքներ, «Տիգրան Մեծ» հրատ., Ե., 2007, էջ 42-43:

գրաբարում **ն** ձայնորդով վերջացող գոյականի հոգնակի թվի կազմությանը. Մարգում մնացած երիտասարդներին կարելի է հաշվել **մատերի** վրա («Հ2» հ/ը, «Լրաբեր», 13.11.04, հաղորդավար): Անշուշտ, պետք էր վերականգնել **ն** բաղաձայնը և հոգնակին կազմել **մատներ** ձևով, հմմտ.՝ **մատների վրա**:

Հմմտ. նաև **ոտների** խոսակցական բառաձևը («ԱԼՄ» հ/ը, «Բազմակետ», հաղ., 18.05.05): Պետք է լինե՞ր՝ **ոտքերի**:

Ռուբիկոնը կներկայացնի «Գոհարի» հետագա **գործունեությունների** մասին («Նոր ալիք» հ/կ, «Ռուբիկոն պլուս», 31.03.05, ծրագրավար): **Գործունեություն** բառն անհոգնական գոյական է, այստեղ պետք է հանդես գար միայն եզակի ձևով:

բ) Գոյականի հոլովի քերականական կարգը: Նորմ և կիրարկություն: Հայտնի է, որ հայերենում գոյականի հոլովման համակարգում կարող են ի հայտ գալ զուգաձևություններ և բազմաձևություններ: «Հոլովական համակարգում զուգահեռ ձևերը և լեզվական նորմից կատարված շեղումները հիմնականում հետևանք են խոսակցական լեզվի ազդեցության, նաև տարբեր հոլովումների փոխադարձ ներթափանցման, նմանակության, մասամբ էլ բարբառների անմիջական ազդեցությամբ են պայմանավորված: Հոլովական օրինաչափական ձևերից շեղումներ կատարվում են նաև այն պատճառով, որ տարբեր հոլովումների պատկանող բառերի միջև որոշակի հատկանշային տարբերություններ չենք կարող ներկայացնել. տարբերություններ, որոնցով առաջնորդվելիս որոշվի տվյալ բառի հոլովումը»¹:

Հոլովական համակարգի ընդունված նորմերից շեղումներն էլ եկտրոնային լրատվամիջոցներում հազվադեպ են: Այնուհանդերձ, եթերում այդօրինակ սխալ կիրարկություններ հանդիպում են:

Հմմտ. Մարդիկ հաճույքով դիտում են

ամեն մի **շարժմանը** («Հինգերորդ ալիք» հ/ը, «Gellete-սպորտ 2006», 25.07.06, մեկնաբան): **Շարժում** բառը՝ որպես իրանիշ գոյական, հայցական հոլովում պետք է լինի ուղղականաձև. **դիտել շարժումը**:

Պապու մասին պատմում է... («Հ1» հ/ը, «Հայլուր», 23.04.04, հեռուստալրագրող): **Պապ** բառը ենթարկվում է ի ընդհանրական հոլովման. **պապի, պապի(ն), պապից** և այլն: Գրական հայերենում տվյալ բառը **ի/ու** հոլովական գուգաձևություն չունի: Խոսակցական ոճին է բնորոշ **պապի** բառը, որից էլ **պապու, պապուց** (խսկց.) ձևերը²:

Հմմտ. նաև **Իջևանու**³ («Շանթ» հ/ը, 22.03.2011, ժամը 10:05): Պետք է լինե՞ր՝ **Իջևանի**:

Բ. Ածականական նորմ և կիրարկություն

- Ածականը ցույց է տալիս առարկայի հատկանիշ կամ վերաբերություն, դառնում է գոյականական անդամի որոշիչ լրացում, ունի յուրահատուկ կազմություն (ածականակերտ ածանցներ), բաժանվում է երկու տեսակի (որականական և հարաբերական):
- Որականական ածականները ցույց են տալիս առարկայի ինքնին ունեցած հատկանիշ: Նրանց մեծ մասն ունի համեմատության աստիճաններ:
- Հարաբերական ածականներն առարկայի հատկանիշն արտահայտում են մեկ ուրիշ առարկայի հարաբերությամբ, նրա միջոցով և չունեն համեմատության աստիճաններ:

² **Տատի, տատի(ն), տատից** և այլն, ինչպես նաև **պապի, պապից** և այլն (ոչ թե **պապու, պապուց...**) ձևերի մասին տես Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 83:

³ Ինչ վերաբերում է հատուկ անուններին, ապա ուղղագրական նորմի և կիրարկության հայեցակետից անդրադարձել ենք ընդհանրապես հատկանվանական սխալներին: Հետևյալ օրինակը **Հարավարևմտյան թաղամաս** հատկանվան խոսակցական տարբերակն է՝ **Բանգլադեշ** («Հայաստ. հանր. ուղի», «Խելք խելք», 04.05.05, ծրագր.): Եթերի լեզուն գրական հայերենն է, ուստի պետք էր գործածել նորմով հանձնարարելի բառը:

¹ Աղաջանյան Զ. Խ., նշվ. աշխ., էջ 144:

Անդրադառնանք ածականական նորմից նկատվող այն շեղումներին, որոնք առկա են հեռուստատեսությունում:

Ֆրանսիա տեղափոխվելը **շատ ճակատագրական** կարևորության որոշում էր նրա համար («Հինգերորդ ալիք» հ/ը, Մարզական հաղորդում, 23.04.05, հաղ.): **Ճակատագրական** ածականը չունի համեմատության աստիճաններ, չի կարող գործածվել **սաստիկ**, **չափազանց**, **շատ**, **խիստ**, **շատ-շատ** և չափի ու աստիճանի իմաստ ունեցող այլ բառերի հետ:

Հմմտ. նաև **ահավոր շատ** սխալ կապակցությունը («Հ2» հ/ը, 30.04.2010, 11:10): Պետք է լիներ՝ **չափազանց՝ սաստիկ շատ**:

Շատ հնագույն փողոցներից մեկում («Նոր ալիք» հ/ը, «Լուր», 23.03.05, ծրագր.): **Շատ** բառի և **-գույն** ածանցի համատեղ կիրառությունն անընդունելի է: Պետք է լիներ կամ **շատ հին**, կամ **հնագույն**¹:

Գ. Թվականական նորմ և կիրարկություն

Առարկաների քանակը, թվային կարգը, նրանց բաշխումը որոշ թվային քանակով ցույց տվող բառերը մտնում են թվականի կազմի մեջ:

Եթերում սակավադեպ չեն նաև թվականների գործածության սխալները:

Հմմտ. Այսինքն՝ Մինսկի խումբը փոփոխությունների կենթարկվի, կհամալրվի, և այն առաջարկությունները, որոնք

արվել են **տաս տարիների** ընթացքում, նույնպես կփոխվեն («Կենտրոն» հ/ը, «Ուրվագիծ», 22.09.2008, ժամը 22:00): Պետք է լիներ՝ Այսինքն՝ Մինսկի խումբը փոփոխությունների կենթարկվի, կհամալրվի, և այն առաջարկությունները, որոնք արվել են **տասը տարվա** ընթացքում, նույնպես կփոխվեն:

Առանձնակի անդրադառնանք թվականների արտասանության և կազմության հաճախադեպ սխալներին:

ա) Թվականների արտասանական սխալներ: Բաղադրյալ թվականներից դժվարություն են ներկայացնում.

- **Տասներկու**–ը, որն արտասանվում է տասն(է)րկու: **Տասն** արմատից չի կարելի կրճատել **ն** հնչյունը, և բաղաձայնից առաջ **ե**–ն պետք է արտասանել **է**:

Սխալ է **տասն(յե)րկու** («Արմենիա» հ/ը, 13.03.2011), **տաս(յե)րկու** մանդատ («Շանթ» հ/ը, «Հորիզոն», 21.02.05):

- **Տասներեք**–ը, որը կարդացվում է տասն(է)րեք:

Այս կանոնները վերաբերում են նաև մյուս բարդ թվականներին, որոնք կազմվում են **երկու** և **երեք** պարզ թվականներով, որոնցից կատարվող շեղումներ հաղորդավարների խոսքում նույնպես հանդիպում են:

Օրինակ՝ յոթանասուն(է)րեք – ոչ յոթանասուն(յե)րեք («Շանթ» հ/ը, 06.02.2010, ժամը 21:05): Սակայն պետք է նշել նաև, որ վերջին շրջանի մասնագիտական գրականության մեջ այսօրինակ տեղաշարժերը համարվում են արտասանական գուգաձևություններ²:

- Հի(ց)ուն արտասանությունը սխալ է, ճիշտը **հիսուն** ձևն է.
հի(ց)ուն – հի(ց)ունչորս («TV5» հ/ը, 26.02.2010, ժամը 09:35):
- Վաթսունի և ութսունի թ–ն արտասանում են **ց՝ վա(ց)ուն**, ու(ց)ուն, որը նույնպես սխալ է, պետք է արտասանել **վաթսուն**, **ութսուն**:

¹ Բացարձակ գերադրական աստիճանի վրա **ամենա**– նախաձանցի սխալ հավելման և կրկնակի գերադրության օրինակ է առկա **«Ամենալավագույն** ցանկություններով բարեմաղթում եմ նորանոր հաջողություններ» (հեռուստ.) նախադասության մեջ (տե՛ս Խ. Գ. Բաղիկյան, Ճիշտ խոսենք հայերեն, (Եզվական նորմա): Հայերենում հաճախ գործածվող օտար բառերի բացատրական բառարան, «Լույս» հրատ., Ե., 2012, էջ 65):

Հմմտ. նաև ածականի կազմությանն առնչվող հետևյալ սխալը. **նեպոլիտանական** երգեր («Հայաստ. հանր. ռադիո», «Հոգեբանի ընդունարան», 05.09.04, երաժշտ. խմբագրությ. աշխատակից): Ռուսերենի օրինակով կազմված և գրական հայերենում ածականական մերժելի բաղադրություն է առկա այստեղ: Պետք է լիներ՝ **նեպոլյան**:

² Տե՛ս Ավետիսյան Յու., Տեղաշարժեր արդի գրական հայերենում, «Զանգակ–97» հրատ., Ե., 2011, էջ 10–11:

- **Հարյուրի** արտասանության ժամանակ պետք է -ր-ից հետո հնչի -յ-ն, ինչը շատ հաղորդավարներ սղում են:

Օրինակ՝ **հինգ հարյուր** («TV5» հ/ը, 26.02.2010, ժամը 09:40) – **հինգ հարյուր, հարյուր տոկոս** («Հ1» հ/ը, 04.01.2010, ժամը 09:55) – **հարյուր տոկոս, երեք հարյուր հազար, հազար ինը հարյուր տասնութ** («Հ1» հ/ը, «Հայլուր», 02.05.14) – **երեք հարյուր հազար, հազար ինը հարյուր տասնութ**:

- Դասական թվականները (-երորդ, վերջածանցը ավելանալու դեպքում) արտասանում ենք **քսան(է) րկու(է)րորդ, երեսուն(է)ր(է)րորդ, յոթ(է)րորդ**:

Դասական թվականների հետ արտասանական խախտումներ հաճախակի են հանդիպում հաղորդավարների խոսքում. **քառասունչորս(յէ)րորդ** («Շանթ» հ/ը, 01.03.2010), **քառասուն(յէ) րէք(յէ)րորդ** («Հ1» հ/ը, 06.02.2010):

- Ոչ թե **հարյուրական**, այլ **հարյուրական** («TV5» հ/ը, 20.07.06) և այլն:

բ) Թվականների կազմության սխալներ: **Տաս-տաս** («TV5» հ/ը, «Gellete- սպորտ 2006», 20.07.06, մեկնաբան): Ունենք **տասը** թվականը, որի **տաս** ձևը խոսակցական ոճին է պատկանում, գրական նորմի մակարդակում գործածվում են **տասը** (բաղաձայնով սկսվող բառերի հետ) և **տասն** (ձայնավորով սկսվող բառերի հետ) ձևերը, հմմտ. **տասը գիրք, տասն արդուկ**:

Սխալ է՝ **տաս մարդ** («Երկիր մեդիա» հ/ը, «Երկիրն այսօր», 26.12.04, հաղ.) – **տասը մարդ**:

Սխալ են՝ **վեցը** տարվա ընթացքում, **ուրը** ամսվա կտրվածքով («Կենտրոն» հ/ը, «Ուրվագիծ», 22.09.2008, ժ. 22:30) – **վեց** տարվա, **ուր** ամսվա:

Շատ հաճախ հանդիպում է նաև **ուրսունի** կազմության հետևյալ սխալ տարբերակը՝ **ուրանասուն**. հմմտ. **ուրանասուն(յէ)րկու** («Կենտրոն» հ/ը, 07.02.2011, ժամը 21:05) – **ուրսունէրկու**¹:

¹ Թվականով կազմված հետևյալ գոյականի մեջ ևս առկա է ուրանասուն սխալ բաղադրությունը. **ուրա-**

Դ. Դերանվանական նորմ և կիրառություն: Դերանուններն ունեն ընդհանուր, չտարբերակված իմաստ, ցույց են տալիս կամ ակնարկում են առարկա, հատկանիշ որևէ հարաբերությամբ՝ փոխարինելով գոյականներին, ածականներին, թվականներին և մակբայներին: Ըստ վերը նշված հարաբերության՝ տարբերակվում են անձնական, ցուցական, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, փոխադարձ և ժխտական դերանուններ²:

Կենդանի խոսքում «հատկապես դերանվանական շեղումներն են մտքի աղարտման պատճառ դառնում, աննպատակ ու ավելորդ կրկնաբանություններն են ծանրաբեռնում խոսքը, սխալ դերանվանագործություններն ու ոճական անձշտություններն են աղավաղում լեզուն, ուստի և դերանուններից յուրաքանչյուրի տեղին օգտագործումը, նրբանկատ ընտրությունը, մայրենի լեզվի դերանվանական համակարգի կանոնակարգով առաջնորդվելը ճիշտ խոսելու լավագույն միջոցներից են»³:

- **Ինքը** դերանվան սեռականն է՝ եզակի թ.՝ **իր**, հոգնակի թ.՝ **իրենց**, տրականի ձևերն են՝ եզակի թ.՝ **իրեն**, հոգնակի թ.՝ **իրենց**⁴:

Հմմտ. հետևյալ սխալ գործածությունը. **իրա** էնոցիաները⁵ («Նոր ալիք» հ/ը, «Այս առավոտ», 18.06.06, ծրագր.):

նասունամյակին («Արմենակոր» հ/ը, «Ժամանակի վկան», 20.05.06, ծրագր.): **Ուրան** արմատ չունենք, ուստի պետք է լինե՝ **ուրսունամյակին (ուրս+սուն+ամ+յակ)**:

² Դերանունների մասին հանգամանորեն տես Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, «Լույս» հրատ., Ե., 1969, էջ 107-131:

³ Աղաջանյան Զ. Խ., նշվ. աշխ., էջ 387:

⁴ Ուշագրավ է Խ. Բաղիկյանի այն դիտարկումը, որ «Գրեթե միշտ ռադիո և հեռուստատեսային հաղորդումների ժամանակ կարելի է լսել այսպիսի նախադասություններ՝ «Դու քո սխալ կարծիքը ես պնդում, ես իմ ճիշտ տեսակետս եմ արտահայտում»: ... Ակնհայտ է, որ **իմ-ի** և **ս-ի**, **քո-ի** և **դ-ի** համատեղ գործածությունը նույնպես գրական լեզվի նորմայի խախտում է (ոչ թե իմ գիրքս, քո գիրքդ, այլ գիրքս կամ իմ գիրքը և գիրքդ կամ քո գիրքը)» (տես Բաղիկյան Խ., նշվ. աշխ., էջ 69):

⁵ Պետք է լինե՝ **հույզերը**:

Իր դերանվան իրա բարբառային ձևի փոխարեն պետք է գործածվեր գրական տարբերակը: **Իրանց** մասին («Դար 21» հ/ը, 06.02.2011): Պետք է լինե՜ր **իրենց**:

Էլեկտրոնային լրատվամիջոցներում, մասնավորաբար ռադիոհեռուտատեսային եթերում անհանդուրժելի են ցուցական **այս, այդ, այն** դերանունների և նրանցով բաղադրված մյուս կազմությունների՝ առօրյա-խոսակցական, ինչպես նաև բարբառային ձևերի գործածությունները: Եթերում պետք է կիրառվի այն տարբերակը, որը համապատասխանում է գրական լեզվի սահմանած կանոններին:

Լտենց երբեք չի լինում («Հայաստ. հանր. ռադիո», 29.10.04, «XXL», հաղ.) – **այդպես**:

Լտենց բաները գիտես («Հայաստ. հանր. ռադիո», «Խելք խելքի», 04.08.06, խաղավար) – **այդպիսի** բաները:

Լտենց շոյող բանաձևեր են եղել («Երևան» հ/ը, «Բուրգ», 14.03.05, ծրագր.) – **այսպիսի**:

Չեն ասում **էս** հանցագործությունն **ա** արել, **ստեղից ա** գողացել, **սենց ա** արել, **էդպիսի** բաներ չեն ասում.... կարող են **էն** էլ ասել («Կենտրոն» հ/ը, «Հայելու առաջ», 13.04.14, ծրագրավար): **Այս, այստեղից, այսպես, այդպիսի, այն** ցուցական դերանունների փոխարեն հարկ չկար տուրք տալու բարբառայնություններին¹:

Վերջերս **էդպես** է պատահում: Ու **էսօր էդպես** ճարահատված ոտքի են կանգնել բողոքի («Կենտրոն» հ/ը, «Բոսխալը», 02.05.14, հաղ.) – **այդպես**:

Էս ափսեները...., **էտ** մթնոլորտը...., **էնքան** հետաքրքիր («Հ2» հ/ը, «Ի՞նչ է ուզում կինը», 05.05.14, հաղ.) – հմմտ. **այս, այդ, այնքան**²:

Ե. Բայական նորմ և կիրարկություն:

Ընդհանրապես բոլոր լեզուներում բայը քերականական կարգերով ամենահարուստ խոսքի մասն է: Վերջինս բնութագրվում է ցույց տրված գործողության ընթացականության հատկանիշով: «Բայը ցույց է տալիս առարկայի փոփոխվող հատկանիշը ժամանակի մեջ, ընդ որում՝ փոփոխվող հատկանիշը կարող է արտահայտվել որևէ կոնկրետ ժամանակի հարաբերությամբ կամ առանց դրան»³:

Անշուշտ, քերականական կարգերով այսքան հարուստ խոսքի մասին բնորոշ են նաև զգալի քանակություն կազմող սխալ կիրարկություններ, որոնց դրսևորումներն էլեկտրոնային լրատվամիջոցներում կներկայացնենք ստորև:

1. Բայականությանը պայմանավորված սխալներ:

ա) Ածանցավոր (հիմքակազմիչ, կրավորական և պատճառական ածանցներով) բայեր, նրանց խոնարհման ձևերի սխալներ: Հայտնի է, որ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում ընկնում են ներկայի կամ անորոշի հիմքակազմիչ ածանցները:

Հմմտ. այս կանոնից հետևյալ շեղումները. Երեխան սարսափած **դուրս է թռչել** («Շանթ» հ/ը, «Հորիզոն», 22.02.05, հեռուստալրագրող) – փոխանակ՝ **դուրս է թռել**: որ մեր հետադարձ կապը **կորչել է** («Հ2» հ/ը, 02.09.05, «Դեղատոմս», ծրագր.) – փոխանակ՝ **կորել է**:

Ե և **ա** խոնարհման բայերի **պատճառականը** կազմվում է խոնարհիչներին –**ցն** ածանցն ավելացնելով: Ըստ այդմ, պատճառական բայերը, որոնք կազմվում են անցյալ կատարյալի հիմքից, (ըստ լծորդությունների) ընդունում են համապատասխանաբար –**եցն** կամ –**ացն** ածանցները: Սակայն հմմտ. ստորև բերվող սխալ կիրարկությունները.

¹ Ցուցական դերանունների այսօրինակ բարբառային ձևերի գործածությունների մասին տես Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը, «Էդիթ պրինտ» հրատ., Ե., 2007, էջ 83:

² Ընդհանրապես դերանունների փոխարեն բարբառային փոխառությունների (օր.՝ **սաղ՝ բոլորի** փո-

խարեն և այլն) անընդունելի կիրարկություններին արդեն անդրադարձել ենք մեր ուսումնասիրության երրորդ գլխում (բարբառային բառերի քննության շրջանակներում):

³ Տես Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Եր. համալս. հրատ, Ե., 1987, էջ 513:

Ամաչացնում եք ինձ («ԱԼՄ» հ/ը, «Երաժշտական գանձանակ», 28.05.05, հաղ.) – ամաչեցնում եք: Ցանկացած մարդու կանգնացնում են փողոցում («Երևան» հ/ը, «Իպտո-ֆակտո», 07.06.06, ծրագր.) – **կանգնեցնում են:**

Հարկ է հրաժարվել պատճառական – **ցն** ածանցն ունեցող բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևի ոչ կանոնական (նաև ոչ բարեհունչ) կազմություններից:

Հմմտ. ...կրկեսային համարներով **գարմացրեցին** և **ուրախացրեցին** երեխաներին («Արմենիա» հ/ը, «Ժամը», 08.06.05, հեռուստալրագրող) – **գարմացրին, ուրախացրին:** ...որոնք **աղմուկ բարձրացրեցին** («Հինգերորդ ալիք» հ/ը, «Լուրեր», 21.04.05, հաղ.) – **աղմուկ բարձրացրին:**

Հմմտ. նաև – **ցն** ածանցով և **տալ** բայի հարադրությամբ պատճառականի՝ տվյալ դեպքում սխալ հետևյալ կազմությունները. Պատերազմի հետևանքները շարունակում են իրենց **զգացնել տալ....** («Հայաստ. հանր. ռադիո», «Լուրեր», 16.05.04, լրագրող): Պետք է լինե՞ր՝ **զգալ տալ:** Կամ՝արդյունքները դեռևս իրենց **սպասեցնել են տալիս** («Հ1» հ/ը, «Հայլուր», 19.08.05, հեռուստալրագրող): Ճիշտ է՝արդյունքները **սպասել են տալիս:** – **Ցն** ածանցի և **տալ** բայի համատեղ գործածությունը ենթադրում է մեկին հարկադրել մի բան անելու մի երրորդ անձի միջոցով: Ինչպես տեսնում ենք, բերված նախադասություններում – **ացն** և – **եցն** ածանցներն ավելորդ են:

Հետևյալ օրինակում ներգործական – պատճառական բայի փոխարեն սխալմամբ ընտրվել է չեզոք սեռի բայ. «Կամերտոն» կազմակերպությունը **չի դադարում** նոր տաղանդների որոնումները («Հ2» հ/ը, «Բարի լույս, Հայաստան», 24.05.05, ծրագր.): Պետք է լինե՞ր՝**չի դադարեցնում....** որոնումները կամ՝ **Չեն դադարում** «Կոմերտոն» կազմակերպության՝ նոր տաղանդների որոնումները:

Վ. *կրավորական ածանց* չի ընդունում **տուժել** բայը, մինչդեռ հմմտ. հետևյալ սխալ կիրարկությունը. Այդ պատերազմում հարյուրավոր **տուժվածներ** են գրանցվում («Հայաստ. հանր. ռադիո»,

«Դու գիտես», 03.06.04, խաղավար): Պետք է ասվե՞ր՝ **տուժածներ:**

բ) **Ածանցավոր հիմքով համադրական բայի սխալ կազմություն:** Վերլուծել, վերսկսել, վերածել և նման բայերից չի կարելի առանձնացնել **վերբաղադրիչը** (թե՛ ուղիղ, թե՛ խոնարհված ձևերում): Սակայն հմմտ. Ընկերներով **վեր էինք լուծում**, թե ով է հաղթելու («Երևան» հ/ը, «Լուսաբաց», 10.06.06, ծրագր.) – **վերլուծում էինք:**

գ) **Հարադրական բայերի խոնարհված ձևերի սխալ կիրարկություններ:** Այդօրինակ բայերի խոնարհված ձևերում անընդունելի կիրարկություններ են ստորև բերվողները.

Կարող ենք ենթադրենք («Արմենիա» հ/ը, «Մարդկային գործոն», 21.02.14, հաղ.) – **Կարող ենք ենթադրել:**

Հմմտ. նաև **գլուխ գովել** անվանաբայական հարադրության խոնարհման հետևյալ սխալը. Նա միայն **գլուխ էր գովացել** («Արմենիա» հ/ը, «Լեզենդ», 19.01.05) – **գլուխ էր գովել:**

2. *Բայի արքահայտության ձևերին վերաբերող սխալներ*

ա) **Բայի անդեմ ձևի սխալ կիրարկություն** է առկա հարակատար դերբայի ժխտական հետևյալ ձևում. Հիմնված է **ոչ ստուգված** աղբյուրների վրա («ԱԼՄ» հ/ը, «Երկրագնդի զարկերակը», 17.05.05, հաղ.) – հմմտ. **ոչ ստույգ, անստույգ** (ած.), բայց՝ **չստուգված** (հարակատար դերբ.):

բ) **Բայի դիմավոր ձևերի սխալ կիրարկություններ:** Ե խոնարհման բայի լծորդության սխալ կազմություններ. Քանի որ լկտիության մասին խոսացինք («Երևան» հ/ը, «Բուրգ», 14.03.05, ծրագր.) – **խոսեցինք:** Մենք այդ մասին բազմիցս **խոսացել ենք** (ն.տ., 18.03.05, ծրագր.) – փոխանակ՝ **խոսել ենք:**

Էդ մասին **կխոսանք** («Կենտրոն» հ/ը, «Ուրվագիծ», 04.02.05, ծրագր.) – փոխանակ՝ **կխոսենք¹:**

¹ Հմմտ. ենթադրական եղանակի բայաձևի մեկ այլ բնույթի սխալ կազմություն. **կելոյթ ունենա** («ԱԼՄ» հ/ը, «Երիտասարդ անուններ», 26.05.06, հաղ.) – փոխանակ՝ **ելոյթ կունենա:**

3. Օժանդակ բայի ձևերի սխալ կիրառություններ

ա) Է օժանդակ բայի (հանգույցի) սխալ փոխարինումը ա-ով.բարձր արվեստը, որ ավելի դժվարամարս **ա** («Կենտրոն» հ/ը, «Ուրվագիծ», 23.03.14, ծրագր.) – ավելի դժվարամարս է:*էս* հանցագործությունն **ա** արել (ս.տ., «Հայելու առաջ», 13.04.14, հաղ.) – Այս հանցագործությունն է արել և այլն:

բ) Օժանդակ բայի ժխտական ձևերի սխալ կիրառություններ: Չի և չէ օժանդակ բայերը սովորաբար հաղորդավարների խոսքում սխալ են գործածվում, օրինակ՝ Ճիշտն ասած՝ ինձ համար այնքան էլ պարզ **չի**, թե ինչպես պետք է բացահայտել մեղավորներին.... («Հ1» հ/ը, «25 րոպե», 22.09.2008, ժ. 20:25): Լեզվի պահպանությունը միայն լեզվի տեսչության խնդիրը **չի** («Նոր ալիք» հ/կ, «Թեժ անկյուն», 20.07.2008, ժ. 16:30): Այս նախադասությունների ստորոգյալները բաղադրյալ են, հետևաբար չի կարող լինել **պարզ չի, խնդիրը չի**, քանի որ բաղադրյալ ստորոգյալի վերադիրից կամ ստորոգելիից հետո դրվում է **չէ** հանգույցը, ինչպես՝ **խնդիրը չէ, պարզ չէ:**

4. Բայական խոսակցական ոճի (սխալ) ձևեր

Ես մի քիչ **կարամ օգնեմ** քեզ: Ո՞նց **կարա քրեկց** բան **լինի** («Հայ TV» հ/ը, «Բենեֆիս», 04.07.05, ծրագր.), փոխանակ՝ **կարող եմ օգնել...., Ինչպե՞ս կարող է** այդպիսի բան **լինել** կառույցները:

5. Բայական օդարաբանություններ

Լրագրողի լեզվի մաքրությունը խաթարում են նաև **համարվում է, հանդիսանում է, կայանում է** և նման արտահայտություններով օտարաբան կառույցները: Սրանք հաճախ գործածվում են – է հանգույցի փոխարեն: Այսպես՝ Հարցը **կայանում է նրանում**, որ Թուրքիան կնվազեցնի բարեկամական հարաբերությունները Ադրբեջանի հետ (փոխանակ՝ Հարցն **այն է, որ....**) («TV5» հ/ը, «Տեսանկյուն», 10.09.2008, 23:00, ծրագր.): Ղարաբաղը **հանդիսա-**

նում է Ադրբեջանի դեմ պատերազմող պետություն (Պետք է լինի՝ Ղարաբաղը Ադրբեջանի դեմ պատերազմող պետություն է) («Կենտրոն» հ/ը, «Ուրվագիծ», 17.11.2008, 22:30, ծրագր.):

Բուրջանաձեն **գտնում է**, որ նոր կուսակցությունը կշարունակի ՆԱՏՕ-ի հետ ինտեգրվելու ուղեգիծը (փոխանակ՝ **Ըստ** Բուրջանաձեի կամ Բուրջանաձեի **կարծիքով....**) («Կենտրոն» հ/ը, «Ուրվագիծ», 22.08.2008, 22:30, ծրագր.):

Խոսքն այսինչ բանի մասին է պարզ և ճիշտ արտահայտության փոխարեն շատ ենթ լսում **Խոսքը գնում է** ռուսաբանությունը: Խոսքը չի կարող գնալ: Ճիշտ կլինի ասել՝ **խոսք բացվեց, խոսք եղավ:** Օրինակ՝ **Խոսքը գնում է** այն խնդիրների մասին, որոնք ծառացել են Հայաստանի առջև: **Խոսքը գնում է** այն մասին, որ ռուսաստանյան ներդրումները զգալի մակարդակի են Հայաստանում («Շանթ» հ/ը, «Հորիզոն», 22.06.2008, հաղ.):

2. Մակբայական նորմ և կիրարկություն

Մակբայներն առաջին հերթին հանդես են գալիս բայերի հետ՝ ցույց տալով գործողության հատկանիշ, սակայն կարող են դրվել նաև ածականների վրա՝ Մակբայը, որոշ վերապահումով, չհոլովվող ու չթեքվող խոսքի մաս է: Այն շարահյուսական մակարդակում կատարում է պարագայի գործառնություն, հիմնականում արտահայտում է գործողության կամ դրության հատկանիշ, հատկանիշի հատկանիշ:

Մակբայական սխալ կիրարկություններ մեզանում (էլեկտրոնային լրատվամիջոցներում) շատ քիչ են հանդիպում: Հմմտ. **շատ-շատ** մակբայի հետևյալ անընդունելի կիրարկությունը. Մի քիչ **շատ-շատ** հեռու են իրարից («Արմենիա» հ/ը, 21.03.2010, ժամը 11:40):

¹ Մեզանում մակբայների հանգամանակից քննություն է կատարել Ա. Ս. Քյուրքյանը «Հայերենի մակբայները» («Էդիթ պրինտ» հրատ., Ե., 2011) աշխատության մեջ:

Հայտնի է, որ գոյություն ունեն խոսքի մասային տարարժեք բառեր, որոնք դրսևորում են գոյական//ածական, ածական//մակբայ, մակբայ//կապ և այլ ձևաբանական արժեքներ:

Այդ կարգի տարարժեքություն է դրսևորում **մանրամասն** բառը (**մանրամասն** տեղեկույթ – ած., **մանրամասն** տեղեկացնել – մկբ.): Սակայն հետևյալ նախադասության մեջ հարկ էր գործածել ոչ թե վերը նշված բառը, այլ **մանրամաս** գոյականը. «Մի տարօրինակ **մանրամասն** ևս. ապակենման հալված գրանիտը պատերի ներսից է» («Երկիր մեդիա» հ/ը, Հաղորդում՝ նվիրված թոշոդ կառքերին և զանգվածային ոչնչացման զենքերին, 17.12.04), «Մի տարօրինակ **մանրամաս** ևս.....»: Հմմտ. Կարևոր **մանրամաս**, հիշել ամեն մի **մանրամաս** և այլն:

Այսպիսով՝

1. Էլեկտրոնային լրատվամիջոցներում գոյականական նորմի և կիրարկության փոխհարաբերություններում մի շարք անջրպետներ են ի հայտ գալիս մասնավորաբար գոյականի թվի և հոլովի քերականական կարգերում:
2. Թե՛ որակական, թե՛ հարաբերական ածականների կիրարկության սխալները հեռուստառադիո եթերում սակավադեպ են, սակայն ի հայտ են գալիս թե՛ որակական ածականների համեմատության աստիճանների անընդունելի կազմություններ և թե՛ հարաբերական

ածականների անընդունելի կիրարկություններ:

3. Ձևաբանական–թվականական նորմի և կիրարկության հայեցակետից ուշագրավ են թե՛ թվականներին վերաբերող ուղղախոսական «վթարները», թե՛ թվականների անբարեհունչ և անընդունելի կազմությունները և թե՛ այդ կարգի բառերի սխալ գործածությունները գոյականների հետ:
4. Ձևաբանական–դերանվանական նորմից կատարված շեղումներն էլեկտրոնային լրատվամիջոցներում վերաբերում են մասնավորապես անձնական և ցուցական դերանուններին:
5. Մակբայների (տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի) սխալ կիրարկությունները խնդրո առարկա լրատվամիջոցներում համեմատաբար սակավադեպ են: Երբեմն գոյականի փոխարեն խոսքում գործածում են մակբայ, ինչն անընդունելի է:
6. Ռադիոհեռուստատեսային հաղորդումներում ի հայտ եկող բայական սխալները վերաբերում են թե՛ բայակազմությանը, թե՛ բայի արտահայտության (դիմավոր և անդեմ) ձևերին: Զգալի տեսակարար կշիռ են կազմում բարբառայնություններն ու խոսակցական ոճի ձևերը, ինչպես նաև օտարաբանությունները:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 27.09.2014

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1962, 729 էջ:
2. Աբրահամյան Ա., Արդի հայերենի դերանունները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1956, 355 էջ:
3. Աբրահամյան Ա., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1965, 567 էջ:
4. Աբրահամյան Ա., ժամանակակից հայերենի քերականություն, «Լույս» հրատ., Ե., 1969, 439 էջ:
5. Աբրահամյան Ա., ժամանակակից գրական հայերեն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1981, 407 էջ:
6. Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, Եր. համալս. հրատ., Ե., 1987, 736 էջ:
7. Աղայան Էդ., ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը (Կառուցվածքային վերլուծություն), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1967, 404 էջ:
8. Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հիմունքներ, «Տիգրան Մեծ» հրատ., Ե., 2007, 450 էջ:
9. Ավետիսյան Յու., ժամանակակից հայերենի նորմավորման հարցեր, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների դրույթներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2013, էջ 110-112:
10. Ավետիսյան Յու., Տեղաշարժեր արդի գրական հայերենում, «Զանգակ-97» հրատ., Ե., 2011, 92 էջ:
11. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու. Ձևաբանություն, «Զանգակ-97» հրատ., Ե., 2008, 288 էջ:
12. Բաղդիկյան Խ., Ճիշտ խոսենք հայերեն (լեզվական նորմա): Հայերենում հաճախ գործածվող օտար բառերի բացատրական բառարան, «Լույս» հրատ., Ե., 2012, 200 էջ:
13. Բարսեղյան Ա., Բայի քերականական ձևերի ոչ ճիշտ կիրառությունները ԶԼՄ-ների լեզվում, Զահուկյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, «Զանգակ» հրատ., Ե., 2012, էջ 27-33:
14. Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը, «Էդիթ պրինտ» հրատ., Ե., 2007, 200 էջ:
15. Խաչատրյան Լ., Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, «Զանգակ-97» հրատ., Ե., 2011, 272 էջ:
16. Խլղաթյան Ֆ., ժամանակակից հայոց լեզու, մաս Բ, «Զանգակ-97» հրատ., Ե., 2010, 237 էջ:
17. Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Եր. համալս. հրատ., Ե., 1972, 454 էջ:
18. Զահուկյան Գ., ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, «Միտք» հրատ., Ե., 1967, 90 էջ:
19. Վարդանյան Ն., Քերականական նորմերի որոշ խախտումների մասին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումներ, «Էդիթ պրինտ» հրատ., Ե., 2013, էջ 131-135:
20. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու 1956-2006 (կազմող, մեկնաբանությունների հեղինակ և խմբագիր՝ Հ. Խ. Բարսեղյան), «9-րդ հրաշալիք» հրատ., Ե., 2006, 384 էջ:
21. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանության գործնական աշխատանքների ձեռնարկ, «Զանգակ-97» հրատ., Ե., 2002, 112 էջ:
22. Միրումյան Մ., Հայոց լեզու. տեսական և գործնական դասընթաց (ինչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), «Զանգակ-97» հրատ., Ե., 2012, 344 էջ:
23. Քյուրքչյան Ա., Հայերենի մակբայները, «Էդիթ պրինտ» հրատ., Ե., 2011, 510 էջ:
24. Օհանյան Հ., Ածական անունը ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ., Ե., 1962, 181 էջ:
25. Введенская Л., Павлова Л., Кашаева Е., Русский язык и культура речи, учебное пособие для вузов, изд. «Феникс», Ростов н/Д, 2007, 539 стр.
26. Граудина Л., Вопросы нормализации русского языка. Грамматика и варианты, изд. «Наука», М., 1980, 288 стр.
27. Потебня А., Из записок по русской грамматике, Т. 1, Учпедгиз, М., 1958, 536 стр.
28. Русский язык и культура речи, ըստ <http://www.studfiles.ru/preview/845419/> (www.Studfiles.ru/preview/845419/page:22/) կայքի, 01.07.2014 թ.:

МОРФОЛОГИЧЕСКАЯ НОРМА И УЗУС

НАРИНЕ ВАРДАНЯН

*Национальная академия наук РА,
Международный научно-образовательный центр,
начальник отдела обеспечения качества образования*

В статье на основе материалов СМИ рассматриваются морфологические нормы современного армянского языка, в частности, вопросы использования частей речи, имеющих вещественное значение (существительное, прилагательное, числительное, местоимение, глагол и наречие), а также наблюдаемые отклонения от морфологических норм.

Наши исследования показывают, что в современных электронных СМИ наблюдается множество отклонений в использовании частей речи, имеющих вещественное значение, в частности:

1) во взаимоотношениях нормы существительного и его использования выявляется ряд барьеров, в частности, в грамматических рядах числа и склонения существительного;

2) наблюдается ограниченное количество ошибок в использовании как качественных, так и относительных прилагательных, однако выявляются как недопустимые формы образования сравнительной степени качественных прилагательных, так и недопустимое использование относительных прилагательных;

3) с точки зрения морфологической нормы числительного интересны как орфоэпические “неудачи/сбой”, касающиеся числительных, так и неблагозвучные и неприемлемые образования числительных и их неправильное использование с существительными;

4) отклонения морфологических норм местоимений в СМИ относятся, в частности, к личным и указательным местоимениям;

5) неверное использование наречий (места, времени, образа действия, меры и степени) в средствах массовой информации встречается относительно редко. Иногда вместо существительного в речи используется наречие, что недопустимо;

6) в радио- и телепередачах ошибки, связанные с использованием глагола, относятся как к образованию формы глагола, так и к формам его выражения (личные и безличные). Значительную долю составляют диалектизмы и формы разговорной речи, а также варваризмы.

MORPHOLOGICAL NORM AND USAGE

NARINE VARDANYAN

*International Scientific-Educational Center of the National Academy of Sciences
of the Republic of Armenia
Head of the QA Department at ISEC NAS RA*

Within the framework of the article on the basis of the media material we have referred to the modern morphological norm in the Armenian language, particularly to those parts of speech which have material meaning (noun, adjective, numeral, pronoun, verb and adverb), to their usage, norms observed and morphological derogations.

Our studies show, that in the contemporary electronic media there are many derogations from the point of view of parts of speech that have material meaning and their usage, particularly.

1. In the relationship of the noun norm and its usage there emerge a number of derogations, particularly in the grammatical categories of noun and case.

2. The usage mistakes of both qualitative and relative adjectives are rarely broadcast on the radio and TV. However there do emerge unacceptable constructions of both-degrees of comparison of qualitative adjectives and unacceptable usage of relative adjectives.

3. From the point of view of morphological-numerical norm and its usage, orthoepic “accidents” of numerals, their inharmonious, unacceptable structures and incorrect usage with nouns are remarkable.

4. Derogations from the morphological-pronominal norm in the electronic media mainly refer to personal and demonstrative pronouns.

5. The incorrect usage of adverbs (place, time, manner, frequency, degree) are relatively rare in the media. Sometimes, in the flow of speech an adverb is used instead of a noun, which is unacceptable.

6. The verbal mistakes emerging on the radio and TV programmes refer both to verb formation and finite/non-finite forms of the verb. Forms of conversational style, jargons as well as foreignisms form a large proportion.